ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/06.2.3/6656

«13» «06» 2024

«Էլիտար 800» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Արտյոմ Զաքարյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Զաքարյան

Շրջակա միջավայրի նախարարության և «Էլիտար 800» ՍՊԸ-ի (Արտյոմ Աշոտի Զաքարյանը ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետերն է) միջև 2023 թվականի դեկտեմբերի 12-ին կնքվել է «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-24/03» ծածկագրով «Շրջակա միջավայրի նախարարության վարչական շենքում ներքին հարդարման կամ վերանորոգման աշխատանքների» պայմանագիր:

Համաձայն արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության՝ 2018 թվականի օգոստոսի 28-ից մինչև 2024 թվականի մարտի 27-ը Արտյոմ Աշոտի Զաքարյանը հանդիսացել է «ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01284774, հասցե՝ Հայաստան, Երևան, Աջափնյակ, Կարապետյան փ., տ 9, գրանցման համարը՝ 271.110.1034367 /28-08-2018) 100 տոկոս բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար, իսկ 2015 թվականի մարտի 26-ից՝ «ԱԼԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01284774, հասցե՝ Հայաստան, Երևան, Աջափնյակ, Կարապետյան փ., տ. 9, գրանցման համարը՝ 271.110.851072/26-03-2015) գործադիր մարմնի ղեկավար:

«ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊԸ-ն 2022 թվականի օգոստոսի 5-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը, իսկ «ԱԼԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 2022 թվականի նոյեմբերի 11-ից երկու տարի ժամկետով ներառվել են գնումների գործընթացի մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-

րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա) խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ) որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին, իսկ 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետով, 120-րդ և 121-րդ կետերով սահմանված է հետևյալը.

«Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ) տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ) իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Կարգի 119-րդ կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման»:

Հիմք ընդունելով Պայմանագրի 8.3 կետը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի կատարման ապահովման գումարը, ինչը կազմում է 328660 (երեք հարյուր քսանութ հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, անհրաժեշտ է վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 492990 (չորս հարյուր իննսուներկու հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 հաշվեհամարին և շրջակա միջավայրի նախարարությանը ծանուցել վճարման անդորրագրերի պատճենները կամ դրանք տրամադրել gnumner@env.am էլեկտրոնային փոստի հասցեով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով

եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

բ) մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

13/06/2024

X

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARKADI 2901780121

պարտականությունները կատարող

Արկադի Խաչատրյան

Ֆինանսատնտեսական վարչության
Ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Լիլիթ Զոհրաբյան 011 818 529